ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Webster LLC-ն ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/04 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Էլեկտրաէներգիայի հաշվառման համալիրի և Սահմանազատման կետի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական կորուստների ժամային հաշվարկի ծրագրի կատարելագործում և ժամային հաշվարկի ծրագրային մոդուլի ստեղծում Հաղորդման ցանցային կանոնների 252-րդ կետի 2-րդ ենթակետի լրամշակումից հետո անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Շուկայի Կառավարման Ծրագրի (ՇԿԾ) կորուստների հաշվարկային մոդուլի համալրում, ներառելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի (ՀԷՑ-Պերամիդա) տեղեկատվությունը: Աշխատանքի ընթացքում պետք է իրականացվի ՀԷՑ-Պերամիդա ԷԱՀՀ-ից Մեծածախ շուկայի մասնակիցների առևտրային հաշվառման ժամային տվյալների ծրագրային մոդուլի մշակում և ներդնում: Ծրագրային մոդուլի մշակումը պետք է ապահովի ՀԷՑ-Պերամիդա ԷԱՀՀ-ի ՏԲ-ի և ՇԿԾ-ի համատեղ աշխատանքը: Ծրագրային մոդուլի մշակման ընթացքում պետք է լուծվի սահմանազատման կետերից դուրս տեղակայված առևտրային հաշվառման համալիրներով ձևավորված էլեկտրաէներգիայի ժամային կորուստների հաշվարկային արժեքների ստացման խնդիրը: Ակնկալվող աշխատանքները պետք է ներառեն՝ ՀԷՑ-Պերամիդա հաշվառման համալիրներից ստացված 30 րոպե ինտերվալով տվյալների՝ ակտիվ և ռեակտիվ էլեկտրաէներգիայի տվյալների ստացում և մշակում բերելով ժամային հաշվառման տեսքի: ՀԷՑ-Պերամիդա հաշվառման համալիրներից ստացված տվյալներով տեխնոլոգիական կորուստների հաշվարկ ուժային տանսֆորմատորներում, տրոհված պարապ ընթացքի և բեռի կորուստների: ՀԷՑ-Պերամիդա հաշվառման համալիրներից ստացված տվյալներով

	տեխնոլոգիական կորուստների հաշվարկ էլեկտրահաղորդման գծերում։ Հաշվարկված տեխնոլոգիական կորուստների ներառում գործող ՇԿԾ-ի կորուստների հաշվարկման մոդուլ։ Հատուկ պահանջներ Աշխատանքը իրականացնողը պետք է տիրապետի՝ ՀԷՑ-Պերամիդա հաշվառման համակարգի կառուցվածքին։ Կորուստների հաշվարկի մեթոդիկային։ Շուկայի կառավարման ծրագրի (ՇԿԾ) կորուստների հաշվարկման մոդուլին, որը գործում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից շահագործվող էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի (ՀԿ-ԷՀԱՀ) տվյալների հիման վրա։ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի կառուցվածքին։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Webster LLC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/04 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	